

ՊԱՍԱԿ ՀԱՅՐԵՆԵԱՆԷՍ

ՄԻԻԹԱՐԻՆ

Ո՛ր կը գնաս սլացող հոգի հայրենեաց
Սարերն ի վեր թափառական
Որոնելով հին փառքերու մեծութիւնք:



Յոյց տուր ինձ, ժրն է ճանապարհն անծանօթ
Ուրկէ անցաւ Հայն իր վշտի ուխտավայրն
Նախնեաց շիրմին նոր կայնթեղներ ձօնելու:



Պատմէ, այո՛, կ'ունկնդրեմ քեզ ծնրադիր
Քանզի կը զգամ թէ հոգիս
Կ'ապրի երազն հին աւուրց:



Յօղէ ճակատս դաւկահար
Բնաշխարհի Յորդանանու շրերով,
Ձի կը սիրեմ Բանալ աչերս հոգիիս հետ
Նախահայրերս ողջունելու:



Վեր առ սուրբ Խաչդ պաշտամունքի
Եւ քու սիրուդ խորհրդով
Տուր ինձ կորովն դիւցազնօրէն սիրելու:



Ես կը տեսեմ թէ մզկիթին սեմին վրայ
Դիւահարած չար ոգին
Նոր իր արեան մուրով
Փրփրերախ կը գալարուի, կը մեռնի:
Ու ամպերէն շանթեր ցասկոտ
Իբրեւ անէծք երկնքի
Կ'որոտան զոռ դամբանականն
Նորա անշունչ գոյութեան
Մինչ կը մերժէ երկիրն իր մէջ ծածկելու
Դիակն անոր ժանտալից.
Ձի շիրիմներն խորաններ են սրբութեան:



Աբբա՛, Բնչ տօն է այսօր
Յեղիդ համար մարտիրոս,
Նաչէ՛, կզգեակդ չքնազ
Յաւերժահարսն մուսաններու

Որ կը շողայ լճակին
Ջրերուն մէջ ոսկեփայլ
Կը յօրինէ անմահութեան
Անշունքը ներդաշնակ:



Տես, կը խայտան հայրենի
Վսեմ սարերն սպիտակ.
Ջերդ փրկութեան յուշարձաններ
Նոր այգերու շողերուն տակ յորդառատ:



Կը կանաչին սրբագործուած
Դաշտերն հայկեան,
Որոնց վրայ կը բարձրանայ
Մարտիրոսաց արիւններու զոլորչին
Ուր նոր կեանքեր պիտ' սնանին կեանքովն ազգին:



Կը թաւալին յստակ շրերն
Ժայռերն ի վար, հովիտներէն ծաղկալից
Ու կը պատմեն Մկրտութիւնն
Մեր ազգին նոր Գրիստոսին:



Երդիքներէն կը բարձրանայ
Շուխն հայրենի թոնիրներուն
Իբրեւ ազօթք սերունդներու ապագայ
Որ կը ձգտի դէպ ի աստղերն հրաւառ:



Աբբա, Բնչ տօն է այսօր.
Ես կը լսեմ թէ բնութեան ամէն էակ
Մաղկուլեւ և թռչունք աստղերն ու հովիկ
Ամէն շրթունք և ամէն սիրտ սիրազեղ
Կը մասնակցին զերաստուածեան խմբերգին
Ձայնարկելու սաղմոսը սուրբ աւետման:
Ջարթէր Հայաստան, արթնցաւ Մասիս.
Կուսանք ծաղկալից տան քեզ աւետիս
Տօն է հարսանեաց ի տան բնաշխարհին
Գայ պօսակէ զքեզ Աբբան Մխիթար:
Ճննետիկ 27 - 4 - 1919

Մ. ԽԱՆՊԵՆԵԱՆ